Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

24.07.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.07.2014թ.-ի թիվ 62 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունում անցկացվեց 2014թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտոր՝ Ն.Կարապետյանի և ուսուցանվող աուդիտոր՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին քաղաքաշինության վարչության պետ Ա.Հովսեփյանը, նույն վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ասլանյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Շինարարական աշխատանքների գնումների գործընթացի, պայմանագրային պարտավորությունների և շինարարական աշխատանքների շահագործման հավաստիացման առկայություն:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը ունի ֆինանսական վերահսկողության փորձ և ներքին աուդիտորի որակավորում: Աշխատանքները ղեկավարում է ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը:

<u>Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը</u>

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել «ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ վարչության ներքին հսկողության համակարգը՝ բավարար է գործել: Քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պահպանված է :

Գնումների գործընթաց:

ՀՀ կառավարության 2014թ.-ի ապրիլի 10-ի N 532-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձոր մարզի Արտաբույնք համայնքի դպրոցի տանիքի հիմնանորոգման և պատուհանների փոխարինման համար հատկացվել է 41600 հազ. դրամ, որը բաշխվել է հետևյալ կերպ. շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 40000.0 հազ.դրամ, նախագծահետազոտական ծախսեր՝ 1600.0հազ.դրամ, պայմանագրային գինը՝ 1590.0 հազ.դրամ: Առկա է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընդունման-հանձնման ակտը: Գնումները իրականացվել են ԲԸԱՀ ընթացակարգով, հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են գնման պայմանագրեր: Մրցույթների արդյունքում տնտեսվել է 1500.0 հազ,դրամ:

հազ.դրամ

Հ/Հ	Ոլորտը	Նախատեսվել է	Պայմ. գին	Տնտեսում
1.	Շին. մոնտաժային աշխատանքներ ՎՁՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ 03/14 04.07.2014-30.09.2014թթ.	38960.0	37510.0	1450.0
2.	Տեխնիկական հսկողություն ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ 05/14 07.07.2014-30.09.2014թթ.	800.0	760.0	40.0
3.	Հեղինակային հսկողություն ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ 06/14 07.07.2014-30.09.2014թթ.	240.0	230.0	10.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**40000.0**	**38500.0**	**1500.0**

Գնումները իրականացվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան: Կապիտալ աշխատանքները ընթացքի մեջ են, աշխատանքների ավարտման ժամկետ՝ 30.09.2014թ.:

ՀՀ Վայոց ձորի Հերհեր համայնքի ճանապարհի մասնակի հատվածների բարեկարգում: ՀՀ կառավարության 2014թ.-ի ապրիլի 10-ի N 532-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձոր մարզի Հերհեր համայնքի ճանապարհի մասնակի հատվածների բարեկարգման համար հատկացվել է 88400.0 հազ դրամ, որից՝

հազ.դրամ

Հ/Հ	Ոլորտը	Նախատեսվել է	Պայմ. գին	Տնտեսում
1.	Շին. մոնտաժային աշխատանքներ ՎՁՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ 04/14 09.07.2014-31.10.2014թթ.	83258.7	80440.0	2818.7
2.	Տեխնիկական հսկողություն ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ 07/14 09.07.2014-25.12.2014թթ.	1535.5	1489.5	46
3.	Հեղինակային հսկողություն ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ 08/14 09.07.2014-25.12.2014թթ.	511.8	490	21.8
	ԸՆԴԱՄԵՆԸ	**85306**	**82419.5**	**2886.5**

Նախագծահետազոտական ծախսեր նախատեսված՝ 3094.0հազ.դրամ, պայմանագրային գինը՝ 2980.0 հազ.դրամ, տնտեսում 114.0հազ.դրամ: Գնումները իրականացվել են ԲԸԱՀ ընթացակարգով, հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են գնման պայմանագրեր: Առկա է նախագծահետազոտական ծախսերի գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընդունման-հանձնման ակտը:

Գնումները իրականացվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան: Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են, աշխատանքների ավարտման ժամկետ՝ 25.12.2014թ.:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. Հովսեփյան

Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ՝ Խ. Ասլանյան